ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 3433-Ա «10» հուլիսի 2026 թ.

ՆՈՐԱԳԱՎԻԹ 9-ՐԴ ՓՈՂՈՑԻ Հ.45 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՃՇՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վարչական ակտի ընդունման համար հիմք է հանդիսացել Վարդուհի Սահակյանի լիազորված անձ Քրիստինե Գալստյանի դիմումը՝ Նորագավիթ 9-րդ փողոցի հ.45 հասցեում գտնվող հողամասի սահմանները ճշտելու մասին:

Հարցի քննարկման համար հիմք են հանդիսացել 2024 թվականի հոկտեմբերի 18-ի ըստ օրենքի ժառանգության իրավունքի հ.7776 վկայագիրը և նոտար Մարինե Սարգսյանի հ.7774 որոշումը, Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի հ.հ. ԱՏ-10062025-01-1167, ԱՏ-30072024-01-1045, ԱՏ-02102024-01-0624 և Կ-12122024-01-0189 տեղեկանքները, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից որակավորում ստացած անձի՝ 13.02.2025թ. չափագրությունը /N.0329 վկայական/ և Վարդուհի Սահակյանի կողմից 17.07.2025թ ներկայացված համաձայնությունը՝ հողամասը պակաս չափերով քննարկելու մասին:

Տեղագրական հանույթի ճշգրտումից պարզվել է, որ Նորագավիթ 9-րդ փողոցի հ.45 (բնակելի տան) հասցեի հողամասի փաստացի մակերեսը կազմում է 750.59քմ՝ 2024 թվականի հոկտեմբերի 18-ի ըստ օրենքի ժառանգության իրավունքի հ.7776 վկայագիրում ամրագրված 1227.0քմ-ի փոխարեն:

Քննարկվող հողամասն ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների ցանկում, Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի սեպտեմբերի 10-ի հ.204-Ն որոշմամբ հաստատված Երևան քաղաքի գլխավոր հատակագծի համաձայն գտնվում է բնակավայրերի նպատակային նշանակության հողերի բնակելի կառուցապատման գոտում, իսկ ՀՀ կառավարության 2020թ. հունիսի 4-ի հ.1023-Ն որոշմամբ հաստատված հավելվածների համաձայն՝ ըստ տարածագնահատման համաձայնեցված սխեմայի գտնվում է 8-րդ գոտում (հողամասի ծածկագիրն է 01-011-0492-0145-ից համաձայն՝ ՀՀ կառավարության 24.12.2009թ. հ.1517-Ն որոշման):

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 49-րդ հոդվածով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 3-րդ, 53-րդ, 59-րդ և 60-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 52-րդ և 59-րդ հոդվածներով, հաշվի առնելով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության Դ-76109-25 եզրակացությունը.

1. Սահմանել, որ Նորագավիթ 9-րդ փողոցի հ.45 հասցեում գտնվող հողամասի փաստացի մակերեսը կազմում է 750.59քմ, որի սահմանները որոշվում են սահմանված կարգով հաստատված հատակագծով:

2. Ընդունել ի գիտություն, որ սույն որոշումը ենթակա է պետական գրանցման՝ ՀՀ կադաստրի կոմիտեի համապատասխան ստորաբաժանումում:

3. Որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

4. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության, անշարժ գույքի կառավարման վարչությունների պետերի վրա:

5. Որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ, ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐՈՂ՝ Ա.ՓԱՄԲՈՒԽՉՅԱՆ

X

ԱՐՄԵՆ ՓԱՄԲՈՒԽՉՅԱՆ

Signed by: PAMBUKHCHYAN ARMEN 3611840246